Basic information	
Number	N 1861-Ն
Type	Որոշում
Act type	Հիմնական ակտ (30.12.2011-05.06.2014)
Status	Չի գործում
Source	ՀՀՊՏ 2011.12.29/71(874).1 մաս 2 Հոդ.1739.44
Enactment organisation	ՀՀ կառավարություն
Enactment date	29.12.2011
Signing organisation	ՀՀ վարչապետ
Signing date	29.12.2011
Effective date	30.12.2011
Interrupt date	05.06.2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2011 թվականի N 1861-Ն

2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 20-րդ, 22-րդ, 24-րդ և 24.2-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերն ըստ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության համար հատկացված միջոցները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել ընտանիքի անապահովության սահմանային միավորը, ընտանեկան նպաստի (ամսական) բազային մասի և հավելման, ինչպես նաև միանվագ օգնության չափերը՝

1) ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը՝ 30.00 միավոր.

2) ընտանեկան նպաստի բազային մասը՝ 16000 դրամ.

3) 30.01-35.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ,

բ. չորս և ավելի՝ 18 տարին չլրացած անդամ ունեցող ընտանիքների (այսուհետ՝ բազմազավակ ընտանիք) յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

գ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

դ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ.

4) 35.01-39.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝
ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,
բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,
գ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,
դ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ.
5) 39.01 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝
ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,
բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ,
գ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,
դ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 8000 դրամ.
6) միանվագ դրամական օգնության չափերը՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում՝
ա. երեխայի ծննդյան դեպքում՝ 50000 դրամ,
բ. երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ 25000 դրամ,
գ. ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50000 դրամ.
7) հրատապ օգնության չափը՝ ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքում՝ 16000 դրամ:
3. Սահմանել երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ 50000 դրամ, իսկ ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 430000 դրամ:
4. Սահմանել մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի (ամսական) չափը՝ 18000 դրամ:
5. Սահմանել՝
1) զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի ընտանիքի նպաստի (ամսական) չափը՝ 250000 դրամ.
2) զոհված՝ առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի (ամսական) չափը՝ 150000 դրամ.
3) զոհված՝ երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի (ամսական) չափը՝ 100000 դրամ:
6. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին 2012 թվականի չորրորդ եռամսյակում, ըստ անհրաժեշտության, կատարել սույն որոշման 1-ին կետով սահմանված ֆինանսական միջոցների վերաբաշխում՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների միջև՝ ընդհանուր միջոցների մեկ տոկոսի սահմաններում:
7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Ջերմուկի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարներին՝ ապահովել 2012 թվականի ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանիքների հաշվառման (փաստագրման) աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների սպասարկման տարածքում մեկից ավելի համայնքների առկայության դեպքում աշխատանքները կազմակերպել համայնքներում՝ դրանցում ներգրավելով տեղական ինքնակառավարման մարմինները:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2012 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. դեկտեմբերի 29
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1861-Ն որոշման

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

Մարզը	Տարածքային	2012 թվական		
		նախատեսված	այդ թվում՝	2012 թվականին ՀՀ պետական

	մարմինը	միջին ամսական գումարը (դրամ)	հրատապ օգնություն (3%) (դրամ)	բյուջեով նախատեսված գումարի բաշխումը (դրամ)
1	2	3	4	5
ԱՐԱՐԱՏԻ	ԱՐԱՐԱՏ	15,679,636	470,389	188,155,630
	ԱՐՏԱՇԱՏ	82,942,328	2,488,270	995,307,940
	ՎԵԴԻ	73,049,952	2,191,499	876,599,420
	ՄԱՍԻՍ	82,983,348	2,489,500	995,800,175
	Ընդամենը	254,655,264	7,639,658	3,055,863,164
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ	ԱՇՏԱՐԱԿ	82,345,449	2,470,363	988,145,392
	ԱՊԱՐԱՆ	19,073,431	572,203	228,881,173
	ԾԱՂԿԱՀՈՎԻՏ	22,373,818	671,215	268,485,810
	ԹԱԼԻՆ	45,107,822	1,353,235	541,293,867
	Ընդամենը	168,900,520	5,067,016	2,026,806,242
ԱՐՄԱՎԻՐԻ	ԱՐՄԱՎԻՐ	72,594,630	2,177,839	871,135,565
	ՎԱՂԱՐՇԱՊԱՏ	80,264,241	2,407,927	963,170,892
	ԲԱՂՐԱՄՅԱՆ	21,801,530	654,046	261,618,359
	Ընդամենը	174,660,401	5,239,812	2,095,924,815
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ	ԳԱՎԱՌ	75,893,512	2,276,805	910,722,140
	ՍԵՎԱՆ	58,082,056	1,742,462	696,984,676
	ՎԱՐԴԵՆԻՍ	95,934,543	2,878,036	1,151,214,516
	ՃԱՄԲԱՐԱԿ	28,212,357	846,371	338,548,278
	ՄԱՐՏՈՒՆԻ	176,255,754	5,287,673	2,115,069,053
	Ընդամենը	434,378,222	13,031,347	5,212,538,662
ԼՈՌՈՒ	ԹՈՒՄԱՆՅԱՆ	46,232,112	1,386,963	554,785,349
	ՏԱՇԻՐ	35,184,476	1,055,534	422,213,708
	ՎԱՆԱՁՈՐ	191,604,606	5,748,138	2,299,255,273
	ՍՊԻՏԱԿ	133,315,207	3,999,456	1,599,782,481
	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ	143,644,794	4,309,344	1,723,737,522
	Ընդամենը	549,981,194	16,499,436	6,599,774,333
ԿՈՏԱՅՔԻ	ԱԲՈՎՅԱՆ	83,500,410	2,505,012	1,002,004,915
	ՀՐԱԶԴԱՆ	70,203,761	2,106,113	842,445,130
	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ	45,095,746	1,352,872	541,148,952
	ՆԱԻՐԻ	62,143,136	1,864,294	745,717,633
	Ընդամենը	260,943,052	7,828,292	3,131,316,629
ՇԻՐԱԿԻ	ԱՐԹԻԿ	81,325,596	2,439,768	975,907,153
	ԱՄԱՍԻԱ	5,357,994	160,740	64,295,931
	ՄԱՐԱԼԻԿ	31,081,266	932,438	372,975,196
	ԱԽՈՒՐՅԱՆ	47,459,531	1,423,786	569,514,374
	ԱՇՈՑՔ	8,131,430	243,943	97,577,164
	ԳՅՈՒՄՐԻ-1	125,625,388	3,768,762	1,507,504,651
	ԳՅՈՒՄՐԻ-2	163,100,600	4,893,018	1,957,207,194
	Ընդամենը	462,081,805	13,862,454	5,544,981,664
ՍՅՈՒՆԻՔԻ	ԳՈՐԻՍ	53,329,599	1,599,888	639,955,187
	ԿԱՊԱՆ	28,162,570	844,877	337,950,846
	ՄԵՂՐԻ	7,645,698	229,371	91,748,381
	ՍԻՍԻԱՆ	18,258,689	547,761	219,104,271
	Ընդամենը	107,396,557	3,221,897	1,288,758,685
ՏԱՎՈՒՇԻ	ԴԻԼԻՋԱՆ	33,588,897	1,007,667	403,066,769
	ԻՋԵՎԱՆ	59,078,488	1,772,355	708,941,862
	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ	28,185,363	845,561	338,224,360
	ԲԵՐԴ	35,373,492	1,061,205	424,481,909
	Ընդամենը	156,226,242	4,686,787	1,874,714,900
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ	ՋԵՐՄՈՒԿ	6,404,584	192,138	76,855,009
	ՎԱՅՔ	13,230,472	396,914	158,765,661
	ԵՂԵԳՆԱՁՈՐ	43,553,063	1,306,592	522,636,757
	Ընդամենը	63,188,119	1,895,644	758,257,427
	ԱՋԱՓՆՅԱԿ	57,185,911	1,715,577	686,230,927
	ԱՎԱՆ	16,407,606	492,228	196,891,273
	ԱՐԱԲԿԻՐ	29,121,475	873,644	349,457,697
	[illegible]	19,134,781	574,043	229,617,369

ԵՐԵՎԱՆԻ	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
	ԿԵՆՏՐՈՆ	47,979,709	1,439,391	575,756,511
	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ	56,142,218	1,684,267	673,706,614
	ՆՈՐ ՆՈՐՔ	49,651,425	1,489,543	595,817,100
	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	6,681,835	200,455	80,182,020
	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	9,299,085	278,973	111,589,025
	ՇԵՆԳԱՎԻԹ	72,993,265	2,189,798	875,919,174
	ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ	36,688,986	1,100,670	440,267,828
	Ընդամենը	459,737,057	13,792,112	5,516,844,679
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ		3,092,148,433	92,764,453	37,105,781,200

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**